Շուշանիկ Համբարյան

ԱՅՍՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ 7-ՐԴ ԴԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր - Ճարտարապետություն, եկեղեցի, քառախորան, թմբուկ, հատակագիծ, կենտրոնագմբեթ, Այսրկովկաս, Զվարթնոցի տաճար, Հռիփսիմեի տաճար, Զվարիի տաճար:

Ճարտարապետությունը արվեստի այն ճյուղն է, որում մեծ չափով արտահայտվել է Այսրկովկասի միջնադարյան վարպետների ստեղծագործական ամբողջ ներուժը: Նրա ծաղկուն շրջանը 7-րդ դարն է: Մեծ գաղափարների իրականացման և գեղարվեստական ձևերի, կառուցման տեխնիկայի որակով 7-րդ դարի Այսրկովկասի երկրների ճարտարապետությունը հստակորեն առանձնանում է միաժամանակյա գոյատևող Արևելքի և Միջերկրածովյան շրջանների ճարտարապետությունից[1]:

Վաղ միջնադարում Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի եկեղեցական ճարտարապետության ընդհանրությունները պայմանավորված են հայոց Եկեղեցու գերագահությամբ այդ երկու երկրների եկեղեցիների նկատմամբ, կրոնականից բացի՝ քաղաքական, տնտեսական ու մշակութային սերտ կապերով: Այս բոլորի հետևանքով վաղ միջնադարում հայկական ու վրացական եկեղեցական շենքերը նմանվում էին ինչպես հատակագծային ու ծավալատարածական հորինվածքներով, այնպես էլ՝ հարդարանքով: Պատահական չէ, որ, օրինակ, քառախորան, անկյունային երեք քառորդ խորշերով եկեղեցիները քրիստոնյա աշխարհում հանդիպում են այս երկու երկրներում: Շրջիկ շինարարական խմբեր աշխատել են նաև Կովկասում: Օրինակ՝ Վրաստանում Աթենի Սբ. Սիոն եկեղեցին 7-րդ դարում կառուցել է հայ ճարտարապետ Թոդոսակը, իսկ Մցխեթի Սբ. Խաչ եկեղեցու շինարարությանը մասնակցել են հայ քարգործ վարպետները: Լյակիթի կենտրոնագմբեթ, ներգծված քառակոնքով եկեղեցին (Բուն Աղվանքի կենտրոնական շրջանում) Զվարթնոցի տաճարի վերարտադրություն է՝ ավելի փոքրացված և պարզեցված տեսքով: Ըստ Ն. Տոկարսկու՝ Լյակիթի եկեղեցին կառուցել է Աղվանից իշխան Ջիվանշիրը, որը բյուզանդական կայսր Կոստանդինին հանդիպելու առիթով եղել է Վաղարշապատում, տեսել Զվարթնոցն ու տպավորվել և, ինչպես և կայսրը, որոշել է իր երկրում զվարթնոցատիպ եկեղեցի կառուցել, որ անվանել է Սբ. Գրիգոր և հայ կաթողիկոսից խնդրել է Լուսավորչի մասունքներից:

Հայաստանի 4-7-րդ դարերի ճարտարապետության զարգացման պատմությունը բաժանվում է երկու ենթափուլի: Առաջինն ընդգրկում է 4-րդ դարի սկզբից մինչև 6-րդ դարի վերջը և բնորոշվում է կոթողային կառույցների բոլոր հիմնական տիպերի

[1] Տե՛ս Казарян А., Церковная архитектура стран Закавказья VII века. Формирование и развитие традиции, том 1, Москва, 2012, стр. 13:

ստեղծմամբ, ինչպես նաև հելլենիստական շրջանի ճարտարապետությանը բնորոշ շատ գծերի պահպանմամբ: Երկրորդ ենթափուլը՝ 6-րդ դարի վերջից մինչև 7-րդ դարի վերջը: Բնորոշվում է հայկական ճարտարապետության ազգային ինքնատիպության վերջնական ձևավորումով, որն ուղենշեց նրա հետագա զարգացումը մինչև 20-րդ դար[1]:

7-րդ դարի Այսրկովկասի եկեղեցական ճարտարապետության գլխավոր ձեռքբերումներից է անկյունային խորշերով քառախորան խաչաձև-գմբեթավոր տիպը, որ ձևավորվել է այս տարածաշրջանում: Փաստորեն սա միակ եկեղեցական հորինվածքն է, որ ունի տեղական ծագում և որը 7-րդ և 10-րդ դարերի ճարտարապետության մեջ ներկայացված է մոտ երկու տասնյակ օրինակներով (իրենց տարատեսակներով): Եկեղեցիների այս խումբն անվանվում է Հռիփսիմե-Ջվարիի՝ նկատի ունենալով հայկական և վրացական այս տիպի լավագույն օրինակները: Հարկ է նշել, որ 7-րդ դարի օրինակներից Վրաստանի տարածքում կա նման հորինվածքով միայն երեք եկեղեցի, իսկ 10-րդ դարից՝ միայն մեկը (Մարթվիլի): Մնացած օրինակները գտնվում են պատմական Հայաստանի տարածքում:

Հայաստանում պաշտամունքային շինության կենտրոնագմբեթ համակարգը 6-րդ դարի երկրորդ կեսին զարգացավ միջանկյալ խորշերով և անկյունային սենյակներով քառախորան «հռիփսիմեատիպ» եկեղեցիներում: Այդ հորինվածքի որոշիչ հատկանիշը աբսիդների միջև ¾ շրջանի հատակագծով խորշերի առկայությունն է, որով առանց լրացուցիչ հենասյուների զգալիորեն ավելի ընդլայնվում է ներքին տարածությունը և ստեղծվում է ավելի մեծ գմբեթ:

Ճարտարապետական հուշարձանների այս խմբում հատկապես առանձնանում են երկուսը՝ Հայաստանում Հռիփսիմեի տաճարը, իսկ Վրաստանում Ջվարիի տաճարը: Լինելով դասական ճարտարապետության հրաշալի օրինակներ՝ դարձել են ներշնչման աղբյուր հայ և վրացի ճարտարապետների հաջորդող սերունդների համար: Հռիփսիմեն և Ջվարին ունենալով նույն չափերը, հատակագծում նույն կառուցվածքը՝ այնուամենայնիվ ձևավորել են արտաքին հորինվածքի լրիվ տարբեր լուծումներ: Ջվարին բրգաձև հորինվածքով է՝ ներքին տարածական կառուցվածքի արտահայտմամբ, իսկ Հռիփսիմեն ընդհանուր խորանարդաձև ծավալ ունի՝ թմբուկի և գմբեթի ընդգծմամբ, որի արտաքին կառուցվածքում ներքին հորինվածքը չի արտահայտվում, որը հաստատում է այսրկովկասյան ճարտարապետ վարպետների ստեղծագործական մտքի զարգացումը և հարուստ ներուժը:

Ինչպես արդեն նշվեց, այս հորինվածքն իր կատարելությանը հասավ Վաղարշապատի Սբ. Հռիփսիմե տաճարում՝ հայկական ճարտարապետության գլուխգործոցում, որի պատճառով նման եկեղեցիները կոչվում են «հռիփսիմեատիպ», թեպետ տաճարը ժամանակագրական առումով առաջինը չէր: Այն կառուցվել է Վաղարշապատում՝ Հռիփսիմեի և մյուս կույսերի նահատակման վայրում: Սբ. Հռիփսիմե տաճարը, որ կառուցվել է Ավանի տաճարից հետո, իր նախորդի առավել կատարելագործված օրինակն է: Սերվելով խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիների՝ Ավանի տաճարով արմատավորված մի տարբերակից, որը անկյունային խորշե-

[1] Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ, Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 49:

ռով խաչագմբեթ եկեղեցի է, Հռիփսիմեի տաճարը հորինվածքային ընդհանրություններ ունի իր նախօրինակի հետ, ինչպես նաև՝ տարբերություններ, որոնց շնորհիվ անհամեմատ ավելի բարձր են նրա հորինվածքային, կառուցվածքային ու ճարտարապետական արժանիքները[1]: Ըստ Ագաթանգեղոսի՝ այստեղ 301-ին Գրիգոր Լուսավորիչը «վկայարան» է կառուցել՝ կիսագետնափոր դամբարան, որը ավերել է պարսից Շապուհ արքան և 395-ին վերակառուցել Սահակ Պարթև կաթողիկոսը: Ըստ պատմիչ Սեբիոսի՝ 618-ին Կոմիտաս կաթողիկոսը քանդել է այդ վկայարանը (նեղ ու ցածրիկ լինելու պատճառով) և տեղում կառուցել Սբ. Հռիփսիմեի տաճարը: Այն կենտրոնագմբեթ է, քառաբսիդ, չորս անկյուններում երեք քառորդ խորշերով, որոնցից մուտքեր են բացվում դեպի չորս ավանդատները: Սրանք արևելյան պատի մեջ ունեն կիսաշրջանաձև փոքրիկ աբսիդներ, որ հետագայում հանդես եկան հայկական նաև այլ եկեղեցիներում:

Տաճարում ճարտարապետը կարևոր նորամուծություն է կատարել. աբսիդների և ավանդատների լծորդման հանգույցներում դրսից խորշեր է կիրառել, որոնք վերացրել են շարվածքի այս ավելորդ զանգվածները և պատերի հարթ մակերեսներում լույս ու ստվերի խաղ ստեղծել՝ զուտ կառուցողական նշանակությունից բացի ունենալով հսկայական գեղագիտական ներգործություն: Տաճարի չորս անկյուններում տեղավորված են ավանդատներ, որոնք, ի տարբերություն Ավանի տաճարի, քառակուսի են: Նրանց մեջ կարելի է մտնել խորշերի միջից, որոնք նույնպես տեղավորված են անկյունային առանցքների վրա: Աբսիդների ու ավանդատների միջև յուրաքանչյուր ճակատում տեղավորված եռանկյունի խորշերը, ինչպես կառուցողական, այնպես էլ գեղարվեստական տեսակետներից արդարացված նորամուծություններ են, այդ պատճառով էլ լայնորեն կիրառվել են նույն և հետագա դարաշրջանների հայկական ու վրացական եկեղեցական ճարտարապետության մեջ[2]: Արտաքին պատերի այդ խորշերը Սբ. Հռիփսիմե տաճարից հետո կիրառվեցին եկեղեցական այլ կառույցներում, իսկ զարգացած միջնադարում՝ 10-13-րդ դարերում, դարձան հայկական կոթողային ճարտարապետության բնորոշ տարրերից: Հռիփսիմեի տաճարում արևելյան ճակատի այս խորշերը հնարավորություն են տվել բեմի աբսիդը լուսավորել մեկի փոխարեն երեք պատուհաններով:

Սբ. Հռիփսիմե տաճարի ծավալը վերևում ունի խաչաձև լուծում՝ կենտրոնում պսակված 16-նիստանի թմբուկ ունեցող գմբեթով: Եզակի են գմբեթին դրսից կից չորս գլանաձև աշտարակները, ինչպես նաև ներսում թմբուկի պարագծով ընթացող պատշգամբը, որտեղից մուտքեր կան դեպի աշտարակները, նաև անցումներ դեպի աբսիդների գմբեթարդների վրայի թաքստոց-սենյակները:

Անկյունային խորշերով քառախորան տիպին պատկանող հաջորդ հուշարձանը Ձվարիի տաճարն է: Ըստ Գ. Չուբինաշվիլու և մի շարք այլ գիտնականների՝ Ձվարի տաճարի կառուցումը սկսվել է 590-ին և ավարտվել 604-605-ին: Գիտնականների մյուս խումբը, այդ թվում՝ Ի. Ձավախիշվիլին և Պ. Մուրադյանը, այն թվագրում են 7-րդ դարի 30-40-ականներով: Այս թվագրությունն են հաստատում վերջին տարիների ուսումնասիրությունները՝ կատարված Ա. Ղազարյանի կողմից: Ինչպես արդեն նշվեց,

[1] Տե՛ս Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 136:
[2] Տե՛ս Казарян А., Генезис тетраконхов с угловыми нишами в Закавказье (Автореферат), Москва, 1991, стр. 14:

Ջվարի եկեղեցուն գրեթե ժամանակակից է, բայց նախորդում է նրան Սբ. Հռիփսիմեի տաճարը (618): Հատակագծային և մասշտաբային ընդհանրություններով հանդերձ, այս տաճարներն ունեն արտաքին ծավալների լրիվ տարբեր լուծումներ. Ջվարիում արտաքին ծավալներն ընդգծված են բրգաձև լուծումով և արտացոլում են տաճարի հատակագծային կառուցվածքը, իսկ Հռիփսիմեն խորանարդաձև ծավալ ունի և պսակված է լայն թմբուկով ու գմբեթով, որ բոլորովին չի արտացոլում ներքին կառուցվածքը: Այս տաճարները ներկայացնում են Այսրկովկասի վարպետների ստեղծագործական միտքը[1]: Ջվարի եկեղեցու կենտրոնում գտնվում է պատվանդան, որի վրա դրված է փայտյա խաչը, որը, համաձայն Խորենացու, այստեղ է դրվել ի նշան նոր հավատի հաստատման: Ջվարիի մաքրման աշխատանքների ժամանակ գտնվել են քարի բեկորներ, որոնք մաս են կազմել հին պատվանդանի: Այս բեկորների վրա հայտնաբերվել են հայերեն և վրացերեն արձանագրություններ, որն արդյունք է եկեղեցու կառուցման ժամանակահատվածում հայ-վրացական մշակութային միասնական ավանդույթների: Հաջորդ հուշարձանը Աթենի Սիոնն է, որը ևս անկյունային խորշերով տետրակոնք է՝ Հռիփսիմե-Ջվարի տիպի: Արտաքին հորինվածքի առումով նա հարում է Հռիփսիմեին, քանի որ ունի ընդգծված խորանարդաձև կառուցվածք, չնայած շեշտվում է այն միտքը, որ եկեղեցին կրկնում է Մցխեթի Ջվարիին: Աթենի եկեղեցին ունի լայն թմբուկ, իսկ գմբեթի թռիչքն ավելի մեծ է, քան Ջվարիինը: Աթենի եկեղեցին անմիջականորեն կապված է հայկական միջավայրի հետ: Հարավային արտաքին խորշի մեջ եղել է հայերեն շինարարական արձանագրություն[2] (լրիվ եղծված է), որտեղ նշվում է, որ պատվիրատուն եղել է ոմն Թոդոսակը[3]: Աթենի եկեղեցին թվագրվում է 7-րդ դարի երկրորդ կեսով: Ներքուստ այն ծածկված է որմնանկարներով, որոնք վերաբերում են 10-րդ դարին և նորից առնչվում են հայկական իրականության հետ: Արտաքին ճակատները բավականաչափ հարուստ են քանդակներով, որոնք վերաբերում են 7-րդ և 10-րդ դարերին:

Անկյունային խորշերով խաչագմբեթ եկեղեցիների ճարտարապետական ձևերի նշանակության պարզաբանումը հատկապես կարևոր է այն պատճառով, որ խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիների լայնորեն տարածումը 5-7-րդ դարերում նախ և առաջ կապված էր ժամանակաշրջանի աշխարհայացքային փոփոխությունների հետ: Խաչաձև հատակագիծը խորհրդանշում էր խաչը, Քրիստոսի հաղթանակը, քրիստոնեության տարածումը աշխարհի տարբեր կողմերում[4]:

Հայ-բյուզանդական առնչություններն արվեստի ոլորտում ակնհայտորեն երևում են Այսրկովկասի և հատկապես Հայաստանի բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններում և կերպարվեստում: Այս հարաբերությունների ամենակարևոր և նշանակալից ժամանակաշրջանը համարվում է 7-րդ դարը, որը կարելի է անվանել «բյուզանդական հարյուրամյակ» Հայաստանում[5]: Այդ ժամանակ հայ-բյուզանդական

---

[1] Տե՛ս Казарян А., Церковная архитектура стран Закавказья…, стр. 290-301:

[2] Տե՛ս Мурадян П., Армянская эпиграфика Грузии. Картли и Кахети, Ереван, 1985, стр. 93-112

[3] Համաձայն ընդունված տեսակետի՝ նա եղել է եկեղեցու ճարտարապետը, իսկ նոր տվյալները, ըստ Ա. Ղազարյանի, խոսում են այն մասին, որ Թոդոսակը, հավանաբար, թեմի հոգևոր առաջնորդն էր:

[4] Տե՛ս Казарян А., Генезис тетраконхов с угловыми …, стр. 16:

[5] Տե՛ս Арутюнова-Фиданян В. А., Повествование о делах армянских. VII в., „Источник и время”, Москва, 2004, стр. 72:

հարաբերությունները արվեստի բնագավառում հասան իրենց բարձրակետին, հատկապես մեծ վերելք ապրեց ճարտարապետությունը:

Այս շրջանի կարևորագույն հուշարձաններից մեկը Զվարթնոցի տաճարն է՝ կառուցված կաթողիկոս Ներսես Շինարարի կողմից (641-660) տասը ծանր տարիների ընթացքում 650-660 թթ. (ճարտարապետ-գաղատոսի անունը, թերևս, պահպանվել է՝ Յովհան)[1]: Հարելով կենտրոնագմբեթ խաչաձև տաճարներին՝ կլոր կամ բազմանիստ տաճարները էապես տարբերվում են իրենց արտաքին եռաստիճան հորինվածքով՝ դրանով իսկ կազմավորելով կենտրոնագմբեթ խաչաձև տաճարների մի առանձին ենթախումբ: Զվարթնոցի տաճարը այդ ենթախմբի առաջին հայտնի նմուշն է, վաղ միջնադարյան հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը[2]: Զվարթնոցի ծավալա-տարածական հորինվածքի հիմքում ընկած է ռոտոնդայի և քառակոնք ձևերի համակցությունը, արտաքինից այն բրգաձև է, եռահարկ, որն իր նախադեպը չուներ հայկական և այսրկովկասյան ճարտարապետության մեջ: Զվարթնոցի տաճարը կենտրոնագմբեթ խաչաձև տիպի եկեղեցիներից ժառանգել է նրանց հատակագծային հորինվածքի ներքին խաչաձևությունը, որը ներգծված է կլոր պարագծի մեջ: 7-րդ դարի հայկական ճարտարապետական կոթողների շարքում Զվարթնոցն ուրույն տեղ է գրավում: Նա հանդիսանում է տաճար-մարտիրիոն, որտեղ ամփոփված էին Գրիգոր Լուսավորչի մասունքները[3]: Զվարթնոցի տաճարի հետ խիստ աղերսներ ունի Լյակիթ գյուղում հայտնաբերված քրիստոնեական մի մեծ տաճար, որը շրջանաձև կենտրոնագմբեթ շինություն է՝ ներգծված քառակոնքով[4], բայց դրսում երկու ավանդատները և ներքին սյունաշարերը կազմում են ութանկյուն բազմանկյունի: Այն կարծես հայկական Զվարթնոցի տաճարի փոքրացված և ինքնատիպ կրկնօրինակ լինի՝ իր շրջանաձև կենտրոնագմբեթ շինության տեսքով[5]: Տաճարի կառուցվածքը՝ շրջանաձև տեսքով և ներգծված քառակոնքով, բավական հայտնի է Կովկասում: Տաճարի կոպիտ շարվածքը, նաև տեղական ճարտարապետական ավանդույթները, չէին կարող չհանգեցնել որոշ կարևոր շեղումների կատարյալ օրինակից, ինչպիսին է Զվարթնոցի տաճարը: Այդպիսի կարևոր, աչքի ընկնող շինություններ են երկու ավանդատները՝ տեղադրված տաճարի արևելյան մասում: Լյակիթում աղվանական տաճարի հիմնումը Զվարթնոցի նմանությամբ բացատրվում է այն բարեպաշտությամբ, որը Գրիգոր Լուսավորչի հանդեպ ցուցաբերում էր Աղվանքի իշխան Ձևանշիրը, ով, ըստ ամենայնի, ներկա է գտնվել Հայաստանում Զվարթնոցի տաճարի՝ Գրիգոր Լուսավորչի մարտիրիոնի օծմանը, ինչպես նաև խնդրել է Գրիգոր Լուսավորչի մասունքներից:

---

[1] Տե՛ս Զվարթնոցի տաճարի թվագրման հարցի շուրջ առավել մանրամասն տե՛ս Յակոբյան Ա., Հայ-բիզանդական յարաբերութիւնները Է դարի կէսերին եւ Զուարթնոցի տաճարի կառուցման ժամանակը ՄՄԱԵԺ, XXIV, Եր., 2005, էջ 366-426:

[2] Տե՛ս Թորամանյան Թ., Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հատոր Ա, Երևան, 1942, էջ 259:

[3] Առաջին անգամ այդ մասին նշել է Ստ. Մնացականյանը, տե՛ս Мнацаканян С. Х., Звартноц. Памятник армянского зодчества VI-VII веков, Москва, 1971, ինչպես նաև՝ Հակոբյան Զ., Զվարթնոցի խորհրդաբանական կերպարը, Էջմիածին, 2006, N 6(Զ), էջ 77:

[4] Տե՛ս Амиранашвили Ш. Я., История грузинского искусства, Москва, 1963, стр. 111:

[5] Տե՛ս Казарян А., Албанская церковь в Леките и ее место в архитектуре стран Закавказья// Albania Caucasica: Сб. статей - Вып. I, Москва, 2015, стр. 238-251:

Հյուսիսային Աղվանքի առավել հայտնի և խոշոր մոնումենտալ հուշարձաններն են՝ Կումի բազիլիկան և Լյակիթի տաճարը: Կումի բազիլիկան առավել արխայիկ է, Աղվանքի ամենահին հուշարձաններից մեկը: Տաճարը մեծ չափերի եռանավ բազիլիկ է՝ կիսակլոր աբսիդով: Բազիլիկան թեև թաղածածկ է եղել, բայց գմբեթ չի ունեցել: Համեմատաբար սեղմ համաչափություններով և դուրս ցցվող կիսաշրջանաձև աբսիդներով հանդերձ հուշարձանը զգալիորեն տարբերվում է ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի ձգված համաչափություններ ունեցող վաղ միջնադարյան բազիլիկաներից: Այս ամենի հետ մեկտեղ Կումի տաճարն իր հատակագծային հորինվածքով մոտ է 7-րդ դարի հայկական խաչաձև-գմբեթավոր բազիլիկաներին (Մրենիում, Բագավանում, Գայանեի տաճարը Վաղարշապատում): Վրացական խաչաձև-գմբեթավոր բազիլիկաները այդքան մոտ ձևեր չունեն: Գմբեթը, որն այնքան բնորոշ է 7-րդ դարի հայկական բազիլիկաներին, Աղվանքում դեռևս չէր ընդհանրացել[1]:

Այսպիսով, կարելի է ասել, որ Աղվանքի վաղ միջնադարյան ճարտարապետության կազմավորման հարցում առավելապես նշանակալի է եղել հայկական ճարտարապետության դերը, հանգամանք, որն իր բավարար բացատրությունն է գտնում ոչ միայն երկու երկրների պատմիչների կողմից վկայված տնտեսական ու քաղաքական սերտ կապերում, այլև Աղվանքի եկեղեցու՝ հայկականի գերագահությունն ընդունելու հանգամանքում[2]:

Կառուցման տեխնիկայի և շինարարության կազմակերպման մասին գիտելիքները չափազանց կարևոր են՝ հասկանալու ճարտարապետության գեղագիտական սկզբունքները և ճարտարապետական համեմատական վերլուծություն անցկացնելու համար: Այստեղ շատ կարևոր են ճարտարապետական շինությունների վրա թողած քարգործ վարպետների նշանները: Քանի որ գրավոր աղբյուրները մեծամասամբ տեղեկություններ են հաղորդում շինությունների պատվիրատուների մասին և գրեթե միշտ չեն հիշատակել վարպետների աշխատանքը[3], ուստի շինությունների պատերին թողնված այս նշանների հայտնաբերումն ու մեկնաբանումը կարևոր արժեք են ներկայացնում:

Հայաստանի և Վրաստանի եկեղեցիների պատերին գծված այս անսովոր նշաններն արժանացել են ուսումնասիրողների ուշադրությանը տարածաշրջանի կոթո-

---

[1] Տե՛ս Якобсон А. Л., Архитектурные связи Кавказской Албании и Армении// ИФЖ, 1976, № 1, стр. 77:

[2] Նույն տեղում, էջ 69:

[3] Միջնադարյան Հայաստանի ճարտարապետների, նախագծման գործի, շինարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ տեղեկություններ հայ մատենագրության մեջ քիչ են հանդիպում: Սակայն եղած սակավաթիվ փաստերը, նշանավոր կառույցների մանրամասն նկարագրությունը և հատկապես առկա հիմնական աղբյուրը՝ վիմական արձանագրությունները, հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել ինչպես հին Հայաստանի շինարարական գործի դրվածքի մասին, այնպես էլ հայտնի են դարձնում միջնադարյան հայ ճարտարապետներից շատերի անունները: Բայց և այնպես, Հայաստանի հազարավոր հուշարձանների միայն չնչին մասի հեղինակների անուններն են մեզ հասել, որովհետև ինչպես արձանագրություններում, այնպես էլ պատմիչների կողմից հիմնականում նշվում է մեկենաս-կառուցողի, այլ ոչ թե ճարտարապետի անունը: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր նոր փաստ կամ արդեն հայտնի տեղեկությունների նոր մեկնաբանում, որն օգնում է բացահայտելու շինության հեղինակի անձը, խիստ կարևոր նշանակություն է ստանում Հայաստանի մշակույթի, և, առաջին հերթին, ճարտարապետության պատմության համար, տե՛ս Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, նաև՝ Հասրաթյան Մ., Վաղ միջնադարյան Հայաստանի ճարտարապետները «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 2, էջ 118-125:

ղային ճարտարապետության մասնագիտական ուսումնասիրման ընթացքում[1]: Այն հանգամանքը, որ 7-րդ դարի եկեղեցիներն ունեն քարերի վրա պահպանված քարգործ վարպետների նշաններ, որոնք հանդիսանում են վերջիններիս ստորագրությունը և մի շարք կրկնվող նշաններ, հիմք է տվել Ա. Ղազարյանին եզրակացնելու, որ Այսրկովկասի տարածքում այդ դարաշրջանում (մինչարաբական) գոյություն են ունեցել քարգործ վարպետների խմբեր (արհեստանոցներ), որոնք պատվերներ են ստացել Այսրկովկասյան տարբեր իշխանական ընտանիքներից կամ բարձրաստիճան հոգևորականներից և, համապատասխանաբար, աշխատել են և՛ Հայաստանի, և՛ Վիրքի, և՛ Աղվանքի տարածքում: Դա ստեղծում էր ընդհանուր մշակութային միջավայր և նաև բացատրում այն սերտ կապը, որ կար արվեստի և ճարտարապետության միջև: Այդ նշանների մեջ հանդիպում են ինչպես նշան-սիմվոլներ, որոնք հայտնի են դեռ շատ հին ժամանակներից, այնպես էլ տարածված այբուբեններից վերցված առանձին տառեր: 7-րդ դարի հայկական և վրացական եկեղեցիների վրա արված քարգործ վարպետների նշանների թվում կարելի է հանդիպել նաև խաչերի տարբեր ձևերի: Հայտնի է, որ Հայաստանում այդ քարե նշանները շինությունների վրա արվել են 7-րդ դարում, ինչպես նաև 9-րդ դարի երկրորդ կեսից մինչև 10-րդ դարի սկիզբը՝ արաբական տիրապետությունից հետո եղած քրիստոնեական կոթողային ճարտարապետության վերածննդի կարճ ժամանակահատվածում: Այսպիսով, կարելի է ասել, որ այդ նույն ավանդույթը տարածում է ունեցել նաև հարևան Վրաստանում և Աղվանքում՝ կապված Հայաստանի հետ միևնույն ճարտարապետական ավանդույթներով[2]: Յոթերորդ դարի հայկական շինությունների քարե նշաններն առաջինն ուսումնասիրել է Թ. Թորամանյանը՝ գնահատելով դրանց կարևոր նշանակությունը միջնադարյան ճարտարապետության պատմության ուսումնասիրման գործում[3]: Հայտնաբերված այս յուրահատուկ քարե նշանները կարևոր աղբյուր են նշված երկրների ճարտարապետության զարգացման և կառուցողական արվեստի ուսումնասիրման համար:

Այսպիսով, 7-րդ դարում դրվեցին ճարտարապետության հորինվածքային, գեղարվեստական և կառուցողական-կոնստրուկտիվ սկզբունքների հիմքերը, որոնց վրա խարսխվեց ողջ միջնադարյան այսրկովկասյան, մասնավորապես հայկական և վրացական ճարտարապետությունը: Այսրկովկասի միջնադարյան ճարտարապետության ամենամեծ ձեռքբերումներից մեկն է խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածքի ստեղծումը՝ մշակված արդեն 6-րդ դարի երկրորդ կեսից: Հենց 6-7-րդ դարերում են ստեղծվել յուրօրինակ տարածական կառուցվածքներով հայկական և վրացական մեծաթիվ եկեղեցիներ՝ արժանանալով միջազգային համբավի:

---

[1] Տե՛ս Казарян А., Автографы мастеров-каменщиков VII века. Армения, Иверия, Кавказская Албания, Москва, 2012, стр. 4:

[2] Նույն տեղում, էջ 5-6:

[3] Տե՛ս Тораманян Т., Знаки на камнях церкви Звартноц// Вестник Института искусств АН Арм. ССР, 1927, № 2, стр. 3-7:

Шушаник Амбарян, Общие архитектурные черты в стран Закавказья в 7-ом веке, - Итак, можно сказать, что культурная среда Южного Кавказа в 7-ом веке отличается своими уже сформировавшихся и уникальными традициями. 6-7 века представлены как очень плодотворный период в истории церковной архитектуры, особенно главным достижением архитектуры Южного Кавказа в 7-ом веке является четырехапсидный крестово-купольный с угловыми нишами тип, который образуется в этом регионе. Этот факт подчеркивает поистине творческая изобретательность, безграничное богатство и зрелое мастерство архитекторов эпохи и, самое главное, свидетельствует о единстве.

Shushanik Hambaryan, Common Architectural Features of the Caucasus in the 7th Century, - Thus, it can be stated that the cultural environment of the South Caucasus in the 7th century is distinguished by its already formed and unique traditions. 6-7 centuries are represented as a very fruitful period in the history of church architecture, especially the main achievements of the architecture of the South Caucasus in the 7th century is the tetraconch cross-dome with angular niches, that is formed in this region. This fact highlights the truly creative ingenuity, limitless wealth and mature mastery of the architects of the era and, most importantly, it is an evidence of unity.

Շուշանիկ Համբարյան - Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հայցորդ: